

ԱՐԵՒՄՏԵԱՆ ԱՄԵՐԻԿԱՅԻ ԼՐԱՅՈՍՔ Երկուշաբթի, 21 Ապրիլի, 2008

Հայոց Ցեղասպանության 93-րդ տարելիցի ոգեկոչման առիթով Լոս Անջելոսում կենքի է կոչուել համագաղութային մարմին, որը մշակել է յիշատակության յատուկ ձեռնարկներ, որոնց կիզակետը հանդիսանում է Ապրիլի 24-ի առաւօտեան ծաղկեպսակի ծետեղման արարողութիւնը՝ Մոնթբէլլոյի յուշարձանի առջեւ: Հայութեան միասնութիւնը խորհրդանշող սոյն արարողութեամբ, Լոս Անջելոսի հայ համայնքը միանալու է մեր հայրենի ժողովրդի դէպի Ծիծեռնակաբերդ կատարելիք երթին, յարգանքի տուրք մատուցելով մեր նահատակներին: Ծաղկեպսակի զետեղման արարողութիւնից առաջ, տեղի է ունենալու հոգեհանգստեան պաշտօն: Նոյն օրը երեկոյեան ժամը 4:00-ին Հայ Երիտասարդաց Դաշնակցութեան կազմակերպութեամբ կայանալու է բողոքի ցոյց՝ Լոս Անջելոսում Թուրքիայի գլխաւոր հիւպատոսարանի առջեւ:



Լոս Անջելոսում Ադրբեջանի գլխաւոր հիւպատոս Էլին Սուլէյմանովը հանդէս է եկել խափանման նախաձեռնութեամբ, կոչ անելով Լոս Անջելոսի «Վիլշէր Իբէլ» մշակութային հեղինակաւոր կենտրոնի ղեկավարներին, որ կենտրոնի սրահը չտրամադրեն Արցախի 20-ամեակի տօնակատարութեանը, որը տեղի պիտի ունենայ առաջիկայ Մայիսի 2-ի երեկոյեան ժամը 8-ին, իր նոյնանուն հանդիսասրահում: Ադրբեջանի գլխաւոր հիւպատոսը բողոքի գրութիւն է յղել կենտրոնի ղեկավարներին, պահանջելով չեղեալ յայտարարել սոյն միջոցառումը, որը կազմակերպել է Արցախի Ազատագրական Շարժման 20-ամեակի Տօնակատարութեան Համադրող Յանձնախումբը: Նշենք, որ յանձնախմբին մաս են կազմում Լոս Անջելոսի Հայ Մշակութային Հիմնարկութիւնը (Armenian Cultural Foundation) եւ Հ.Յ.Դ. Հայ Դատի յանձնախմբերը: Համադրող Յանձնախումբը նախաձեռնել է մի շարք ձեռնարկներ, որոնց թւում են գեղանկարչական եւ լուսանկարչական ցուցահանդէսներ եւ անշուշտ, «Վիլշէր Իբէլ»-ի հանդիսասրահում կայանալիք միջոցառումը, որը հանդիսանում է տօնակատարութեան գլխաւոր հանդիսութիւնը: Համադրող Յանձնախումբը հաստատապէս յայտարարել է, որ հակառակ Ադրբեջանի գլխաւոր հիւպատոսի ճնշումներին, անպայման նշելու է սոյն միջոցառումը «Վիլշէր Իբէլ»-ի հանդիսասրահում :



Լոս Անջելոսում Հայաստանի Հանրապետութեան գլխաւոր հիւպատոս Արմէն Լիլոյեանը Ապրիլի 18-ին հանդիպում է ունեցել է Լոս Անջելոսի քաղաքապետական խորհրդի նախագահ Էրիք Գարսէթիի հետ: Հանդիպման ընթացքում Էրիք Գարսէթիի խնդրանքով, հիւպատոսը ներկայացրել է Հայաստանի յետընտրական զարգացումները եւ ներկայիս իրավիճակը, տեղեկութիւններ է տուել ընկերային ու տնտեսական բարեփոխումների հարցով Հայաստանի նախագահի եւ նոր կառավարութեան յայտարարած յանձնառութիւնների մասին: Կողմերը քննել են նաեւ լոսանջելոսահայ կենքին առնչուող հարցեր: Արմէն Լիլոյեանը մասնաւորապէս ընդգծել է շրջանի պետական դպրոցներում ուսանող հայ աշակերտների կրթական կարիքները, Լոս Անջելոսի բազմամշակոյթ միջավայրում դպրոցականների միջեւ ներդաշնակ փոխյարաբերութիւնների կարելոթիւնը: Քաղաքապետական խորհրդի նախագահ Էրիք Գարսէթին գլխաւոր հիւպատոս Լիլոյեանին առաջարկել է համատեղ նախաձեռնութիւնների կիրառմամբ հետամուտ լինել լոսանջելոսահայ համայնքին յուզող հարցերին: Երկու պաշտօնատարները քննել են նաեւ Երեւան-Լոս Անջելոս քոյր քաղաքների համագործակցութեան հեռանկարները, միտքերի փոխանակումներ են ունեցել Լոս Անջելոսում Հայաստանի շաբաթ կազմակերպելու գաղափարի եւ համատեղ այլ մշակութային նախաձեռնութիւնների շուրջ: Արմէն Լիլոյեանը նաեւ ներկայացրել է հիւպատոսութեան աշխատանքների հիմնական ուղղութիւնները, առանձնացնելով հայ-ամերիկեան առեւտրա-տնտեսական կապերի զարգացման ներուժը:



Գլխաւոր հիւպատոս Արմէն Լիլոյեանը Ապրիլի 11-ից 13-ը, եռօրեայ այցելութեամբ եղել է Սան

Ֆրանցիսկոյուն, ուր ծանօթացել եւ հանդիպումներ է ունեցել Ծովածոցի շրջանում գործող հայկական կազմակերպութիւնների ու միութիւնների, ինչպէս նաեւ հայ համայնքի անդամների հետ: Հիւպատոսի այցելութեան առիթով, Յ.Յ.Դ. Սան Ֆրանցիսկոյի «Քրիստափոր» կոմիտէութեան Հայ Դատի Յանձնախումբը կազմակերպել է ընդունելութիւն, «Վասպուրական» սրահում:



Հ.Ս.Ը.Մ.ի Ֆրեզնոյի «Սասուն» մասնաճիւղը ամէն տարի, Ապրիլի երկրորդ շաբաթավերջը յատկացնում է բասկէթբոլի մրցախաղերին, որոնք տեղի են ունենում շրջանի 4-րդ եւ 5-րդ դասակարգերի երկսեռ խմբերի միջեւ, մեծ խանդավառութիւն ստեղծելով թէ՛ շրջանի եւ թէ՛ մրցող խմբերի եւ նրանց ընկերացող ծնողների մօտ: Այս տարուայ մրցումները տեղի ունեցան Շաբաթ եւ Կիրակի օրերը՝ Ապրիլի 12-ին եւ 13-ին, Ֆրեզնո քաղաքի քոլէջի եւ «YMCA»-ի մարզահամալիրներում: Մրցախաղերին մասնակցեցին 45 մարզիկներ Հ.Ս.Ը.Մ.ի Գլենդէլի «Արարատ», Փասատինայի «Ազատամարտ», Լոս Անջելոսի, Սան Ֆերնանդո Հովիտի «Մասիս», Մոնթբերէլլոյի, Սան Ֆրանցիսկոյի, Քրեսէնթա Հովիտի «Շանթ» եւ Ֆրեզնոյի «Սասուն» մասնաճիւղերից:

**Այս լուրերը տրամադրում են
ՀՀԴ Արեւմտեան Ամերիկայի
Կեդրոնական Կոմիտէի
Հանրային Կապի Գրասենեակի կողմից
ARF Central Committee
Office of Public Relations
Contact Person: Saro Nazarian
PublicRelations.ARF@hotmail.com
Tel: (818) 243-7059
Fax: (818) 243-1467**

**Այս լուրերը տրամադրելի են նաեւ Internet-ով եւ Fax-ով:
Լուրերը կարելի է վերահրատարակել:**